Հայաստանում արտադրված և անվտանգության ստանդարտներին համապատասխանող խաղալիքները, համաձայն ՀՀ կառավարության թիվ 1281 որոշման, 9 սեպտեմբերի 2004թ., պետք է մակնշված լինեն հետևյալ գրաֆիկական պատկերով՝




Համաձայն «Մանկական խաղալիքների, խաղերի արտադրության և իրացման» սանիտարական կանոնները հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2007թ.-ի մարտի 26-ի թիվ 539-Ն հրամանի,

- խաղալիքների արտադրությունում թույլատրվում է օգտագործել հիգիենիկ փորձաքննության արդյունքում դրական եզրակացություն ստացած հումքը և նյութերը,
- արտադրվող և իրացվող խաղալիքների (խաղերի) օգտագործման ժամանակ, պետք է բացառվեն երեխաների կյանքին և առողջությանը, ցանկացած բնույթի և ծանրության, վնաս հասցնելու հնարավորությունը,
- արտադրվող և իրացվող խաղալիքները (խաղերը) չպետք է պարունակեն կենսաբանական, քիմիական և ճառագայթաակտիվ տարրեր և նյութեր այնպիսի քանակությամբ, որոնք կարող են վնաս հասցնել երեխաների կյանքին և առողջությանը:

**Խաղալիքների արտադրությունում օգտագործման համար թույլատրված նյութերն են՝** պոլիստիրոլը, պոլիէթիլենը, պոլիպրոպիլենը, ակրիլը, սեվիլենը, ֆտորլոնը, պոլիէթիլենային և պոլիէթիլենպոլիամիդային թաղանթները, ռետինը և կաուչուկը:

- Վաճառվող յուրաքանչյուր խաղալիք պետք է լինի առանձին փաթեթավորված, պիտակավորված և պետական լեզվով (հայերեն) մակնշված: Մակնշման մեջ, որը պետք է լինի ընթեռնելի և չմաքրվող, պետք է նշված լինի՝ տարիքային խումբը, որի համար նախատեսված է տվյալ խաղալիքը, օգտագործման ցուցումները, հնարավոր վտանգներից զգուշացումները, պիտանելիության ժամկետը, արտադրող ձեռնարկության անվանումը, հասցեն և արտադրող երկիրը:
- Խաղալիքի պիտակի կամ փաթեթվածքի վրա պետք է առկա լինի որակի նշանը:
- Խաղալիքի բոլոր մասերը պետք է ամուր ամրացված լինեն:
- Փափուկ խաղալիքի տարբեր մասերը պետք է ոչ թե սոսնձված, այլ կարված լինեն:
- Վաճառվող խաղալիքները պետք է դրված լինեն ոչ թե գետնին կամ հատակին, այլ դարակների վրա:

## Օգտակար խորհուրդներ

- Խաղալիք գնելիս, պահանջեք խաղալիքի համապատասխանության սերտիֆիկատը:
- Ուշադրություն դարձրեք փաթեթվածքի, պիտակի և հայերեն մակնշման առկայությանը: **Հիշե՛ք,** մակնշման բացակայությունը վկայում է խաղալիքի անօրինական ծագման մասին:
- Խուսափեք գնել այնպիսի խաղալիքներ, որոնցից, թեկուզ աննշան, բայց վատ հոտ է գալիս:
- Մի գնեք խաղալիքներ, որոնց վրայի ներկը հետքեր է թողնում ձեռքերի վրա:
- Երեխայի ձեռքը մի տվեք խաղալիքներ, որոնց վրա կան ճաքեր կամ անհարթություններ:
- Խաղալիք գնելիս, վաճառողից պահանջեք կտրոնը:
- Դեն մի նետեք խաղալիքի փաթեթվածքը և պիտակը: Դրանք կարող են Ձեզ պետք գալ:

Սույն հրատարակությունը պատրաստվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ օգտագործելով «էկո- համաձայնություն», «Մամա-86» և «Բնապահպանական լուծումների կենտրոն» կազմակերպությունների պատրաստած «Թունավոր նյութերից զերծ խաղալիքներ» զեկույցը:

AWHHE

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
ՀՀ, 0019 Երևան, Բաղրամյան պող. 24դ, 609 սենյակ
Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 52 36 04; էլ. փոստ՝ office@awhhe.am; Վեբ կայք՝ http://www.awhhe.am

# Անվտանգ են արդյոք խաղալիքները

ԵՐԵՎԱՆ 2011

Խաղալիքները երեխայի կյանքում ունեն մեծ նշանակություն, քանի որ դրանց միջոցով նրանք ճանաչում են իրենց շրջապատող աշխարհը, ձեռք են բերում նոր հմտություններ, զարգանում է նրանց հուզական աշխարհն ու երևակայությունը:

Խաղալիք ընտրելիս, գնորդը պետք է հաշվի առնի ոչ միայն երեխայի տարիքը, ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացման մակարդակն ու հետաքրքրությունների շրջանակը, այլև այն, թե որքանով է տվյալ խաղալիքն անվտանգ երեխայի առողջության համար:

Հետևելով այս խորհրդին, Դուք կպաշտպանեք Ձեր երեխային վնասակար նյութերի ազդեցությունից, որոնք կարող են պարունակել խաղալիքները:

## Սպառնալիքները

Հայաստանյան շուկայում վաճառվող չինական, թուրքական և այլ երկրներից ներկրված խաղալիքների մեծ մասի որակի և անվտանգության նկատմամբ չի իրականացվում պատշաճ վերահսկողություն: Շատ խաղալիքների տուփերի վրա, ընդհանրապես, բացակայում է տվյալ ապրանքի՝ անվտանգության և որակի սերտիֆիկացիայի միջազգային և ազգային չափանիշներին համապատասխանության նշանը, այսինքն, որ տվյալ խաղալիքն անվտանգ է երեխայի համար:

Հիմնական թունավոր նյութերը, որոնք կարող են հայտնաբերվել խաղալիքներում, համարվում են կապարը (Pb), կադմիումը (Cd), արսենը (As), սնդիկը (Hg), բրոմը (Br) և պոլիվինիլքլորիդը (PVC), ինչպես նաև ֆորմալդեհիդը, ֆենոլը, դիբուտիլֆտալատը, տոլուոլը, քսիլոլը և մեթիլ սպիրտը:

Նշված նյութերը կամ դրանց գոլորշիները երեխաների մոտ կարող են առաջացնել գլխապտույտ, գլխացավ, հևոց, սրտխփոց, ալերգիկ ռեակցիաներ, մաշկի բորբոքում, շնչական ուղիների լորձաթաղանթների սուր գրգռվածություն, քնի խանգարում, ինչպես նաև վարքագծի փոփոխություն:

## Խաղալիքներին ներկայացվող պահանջները

Հայաստանում գործող, խաղալիքների տեխնիկական անվտանգությունը սահմանող փաստաթուղթը մշակվել է դեռևս 2004 թ.-ի նոյեմբերի 11-ին, կառավարության թիվ 1551-Ն որոշմամբ, համաձայն որի՝

- արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խաղալիքների իրացումն՝ առանց համապատասխանության հավաստման,
- ՀՀ տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա և շրջանառության մեջ գտնվող խաղալիքները պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմամբ, համապատասխանության սերտիֆիկատով կամ գրանցված համապատասխանության հայտարարագրով:

Ներկրված խաղալիքները, որոնք համապատասխանում են անվտանգության եվրոպական ստանդարտներին, մակնշված են հետևյալ գրաֆիկական պատկերով՝